ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ

2026-2028

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ

ԾՐԱԳԻՐ

Գավառ համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմման հիմք է հանդիսացել համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը: Համայնքի 2026-2028 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) հանդիսանում է Գավառ համայնքի զարգացման հեռանկարի թվային արտացոլումը և համայնքի միջնաժամկետ կտրվածքով գլխավոր ֆինանսական փաստաթուղթը, որը և հանդիսանում ելակետ՝ նախագծելու համապատասխան տարվան հաջորդող տարեկան բյուջեն:

ՄԺԾԾ-ով ներկայացվում է կանխատեսվող տարիների եկամուտները, դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները, ծախսային ուղղությունները ըստ ոլորտների, որոնք բերելու են Գավառ համայնքի կայուն և համաչափ զարգացմանը, ինչպես նաև հնարավորություններ կընձեռեն համայնքին առավել արդյունավետ գեներացնել եկամուտները, մասնավորապես միջնաժամկետ կտրվածքով կմշակվեն մեխանիզմներ դրանք ավելացնելու ուղղությամբ, որը իր հերթին կբերի համայնքի զարգացմանը միտված ծախսերի ավելացմանը:

2026-2028 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, լինելով համայնքի եկամուտների ձևավորման և ծախսերի կատարման տարեկան ֆինանսական ծրագրերի ուղենիշային փաստաթուղթ ուղղվում է տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում համայնքային ծրագրերի իրականացմանը: Այն ակնկալվող եկամուտների և առաջարկվող ծրագրերի թվարկումն է ֆինանսական տարիների համար:

Գավառ համայնքի 2026-2028 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը նախագծվել է ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով:

Զարգացման հիմնական ուղությունները և սկզբունքները

Գավառ համայնքի 2026-2028 թթ. համար նախանշված ծրագրերի իրականացումը խարսխվելու է համաչափ և կայուն զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքապետարանի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:
2. Հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:
3. Մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:
4. Անվտանգ, առողջ և հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծումը:
5. Աղբահանության կազմակերպման և կարգավորման ապահովումը:
6. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
7. Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման խթանումը և Գավառի զբոսաշրջային միջավայրի բարելավումը:
8. Նախադպրոցական հաստատությունների մատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովումը:
9. Համայնքային ենթակայության մանկապարտեզներ և արտադպրոցական

դաստիարակության ծառայություններ մատուցող հաստատություններ հաճախող, սոցիալապես անապահով երեխաների վարձի մասնակի և ամբողջական փոխհատուցման, մանկապարտեզներին որոշակի գույքով ապահովման, համայնքային ենթակայության արտադպրոցական կրթական կառույցների հիմնանորոգման, մարզական տարածքների բարեկարգման ծրագրերի իրականացումը:

10. Գավառ համայնքում կրթական համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

11. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակույթային կենտրոնների հիմնանորոգումը, մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովումը:

12. Փողոցային լուսավորության համակարգի պահպամումը, էներգախնայող համակարգերի ներդրումը:

13. Հանգստի գոտիների ստեղծումը, կանաչապատման աշխատանքների իրականացումը, Գավառ համայնքի կանաչապատման և կանաչ տարածքների պահպանումը:

14. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը:

15. Երեխաների իրավունքների պաշտպանությունն ու անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավումը:

16. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ 2026 - 2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾՈՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծով եկամուտների կանխատեսումներն իրականացնելիս հաշվի է առնվել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված աղբյուրներից համայնքային բյուջե ձևավորելու իրավական հիմքերը, մոտ անցյալում համայնքային բյուջե փաստացի հավաքագրված եկամտային հոսքերը և առկա բազաների տվյալները:

Հատկանշանական է, որ ընդամենը եկամուտների կազմում աճ է նախատեսվում գրեթե բոլոր բյուջետային բաժիններում և խմբերում:

Գավառ համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծրագրով եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 3,418,003,1 հազար դրամ, 3,682,672,2 հազար դրամ և 3,964,738,5 հազար դրամ:

Հարկեր և տուրքեր՝ 2026 թվականի հարկային եկամուտները և տուրքերը ծրագրելիս օգտագործվել են մակրոտնտեսական այն ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին հարկատեսակների հարկման բազայի ձևավորման վրա: Ցուցանիշների կանխատեսման համար հիմք են ընդունվել նախնական վերլուծությունները, կիրառման առաջարկված մոտեցումները և հաշվարկները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրքը, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները: Պետական տուրքերի գծով բյուջետային մուտքերի կանխատեսումները կատարվել են՝ ըստ նախորդ տարիների փաստացի հավաքագրումների միտումների, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության

օրենսդրության մեջ կատարված առանձին փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև պետական տուրքի յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները:

Անշարժ գույքի հարկը կանխատեսվում է 2026 թ. համար՝ 223,057.2 հազար դրամ, 2027թ. համար՝ 227,000.0 հազար դրամ, 2028թ. համար՝ 232,000. 0 հազար դրամ:

2026-2028 թվականների անշարժ գույքի հարկը կանխատեսելիս հիմք են հանդիսացել 2025 թ. առկա բազաները ինչպես նաև հաշվի են առնվել մինչև 2021 թվականի գոյացած ապառքները: 2026 թվականի համար անշարժ գույքի հարկը (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) հաշվարկվում է անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքների և Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթների կիրառմամբ:

Փոխադրամիջոցների գույքահարկը կանխատեսվում է 2026 թ. համար՝ 430,000. 0 հազար դրամ, 2027 թ. համար՝ 440,000. 0 հազար դրամ, 2028 թ. համար՝ 445,000. 0 հազար դրամ:

2026 թ. համար փոխադրամիջոցների գույքահարկը կանխատեսելիս հիմք են հանդիսացել 2025 թ. առկա բազաները, 2026-2028 թթ. համար կանխատեսվել է 3.4 %-ի աճ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետություն մեքենաների ներկրման ծավալի աճը և ներառված ապառքները:

Տեղական տուրքերը կանխատեսվում է 2026 թ. համար՝ 12,080. 0 հազար դրամ, 2027 թ. համար՝ 12,370. 0 հազար դրամ, 2028 թ. համար՝ 12,680. 0 հազար դրամ:

Պետական տուրքերը 2026-2028 թթ. համար կանխատեսվել են տարեկան 16,000.0 հազ. դրամ:

Պաշտոնական դրամաշնորհներ Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներին «Ֆինանսական համահարթեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով դոտացիաներ տրամադրելու նպատակով «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հատկացումներով նախատեսվել է 2,452,329.900 դրամ, որը 2025 թվականի հաստատված ցուցանիշից ավել է 297,908.400 դրամով, իսկ 2027 թ. համար՝ 2,697,562.900 դրամ, 2028 թ. համար՝ 2,967,319.200 դրամ: Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումը 2026-2028 թթ. համար /սուբվենցիաներ՝ազգային նվազարանների գծով/ կանխատեսվում է 9,804,9 հազար դրամ:

Գույքի վարձակալությունից եկամուտները կանխատեսվում են 2026 թ. համար՝ 58,226,7 հազ. դրամ, 2027 թ. համար՝ 58,430,0 հազ. դրամ, 2028 թ. համար՝ 58,4300,0 հազ. դրամ: 2026-2028 թթ. համար կանխատեսվել է աճ հաշվի առնելով նոր վարձակալության պայմանագրերի կնքման, որոշ պայմանագրերի դադարեցման, բազաների ճշգրտման գործընթացի շարունակականությունը և ապառքների հավաքագրումը:

Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները 2026-2028 թթ. համար կանխատեսվել են տարեկան 4,454.400 դրամ:

Տեղական վճարները կանխատեսվում է 2026 թ. համար՝ 200,850,0 հազար դրամ, 2027 թ. համար՝ 205,850,0հազար դրամ, 2028 թ. համար՝ 205,850,0 հազ. դրամ:

Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարները կանխատեսվում է 2026 թ. համար՝ 6,000,0 հազար դրամ, 2027 թ. համար՝ 5,000,0հազար դրամ, 2028 թ. համար՝ 5,000,0 հազ. դրամ:

Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները 2026-2028 թթ. համար կանխատեսվել են տարեկան ՝ 200.0 հազար դրամ:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման

ենթակա այլ եկամուտները կանխատեսվում է 2026 թ. համար՝ 5,000. 0 հազար դրամ, 2027 թ. համար՝ 6,000. 0 հազար դրամ, 2028 թ. համար՝ 8,000. 0 հազ. դրամ:

Ֆոնդային բյուջեի եկամուտներ են կանխատեսվել Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների մուտքերից, որը 2026 թ. համար կանխատեսվել է 1,020,000.0 հազար դրամ, 2027 թ. համար՝ 1,100,000.0 հազար դրամ, 2028 թ. համար՝ 1,180,000.0 հազար դրամ, իսկ հիմնական միջոցների իրացումից մուտքերից 2026 թ. համար կանխատեսվել է 150,000,0 հազար դրամ, 2027 թ. համար՝ 125,000.0 հազար դրամ, 2028 թ. համար՝ 150,000.0 հազար դրամ՝ հաշվի առնելով համայնքի տարածքում օտարման ենթակա հողամասերի սահմանափակ լինելը:

ՀԱՄԱՅՆՔԻ 2026 - 2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Օրենքով սահմանված կարգով համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական և պատվիրակված լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի ծախսային մասը կազմելու համար հիմք է հանդիսացել 2022-2026 թվականների համայնքի զարգացման հնգամյա ծրագրի դրույթները:

1. <u>Ծրագրի անվանումը՝ *«Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում»*</u>

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 01, խումբ 1, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում համայնքի բնակչությանը որակյալ ծառայությունների մատուցման համար համայնքապետարանի աշխատակազմի պահպանում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է Գավառի համայնքապետարանի աշխատակազմի համար ստեղծել պատշաճ աշխատանքային պայմաններ, օրենքով սահմանված լիազորությունների և պարտավորությունների լիարժեք իրականացման համար:

2026 թվականի համար Գավառի համայնքապետարանի աշխատակազմի պահպանման ծախսերը նախատեսվում են **621,920.0 հազ. դրամ,** 2027 թվականի համար՝ **498,220.0 հազ. դրամ,** 2028 թվականի համար՝ **564,220.0 հազ. դրամ:**

Կառավարման ապարատի պահպանման ծախսերը հաշվարկելիս հաշվի են առնվել նախորդ տարիների ընթացքում կատարված փաստացի ծախսերը, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրենց բաժինների բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, գույքի, աշխատանքների և ծառայությունների գնումները:

2026 թվականին նախատեսում է ներկայացնել ենթակառույցների զարգացման նոր սուբվենցիոն ծրագրեր:

2. <u>Ծրագրի անվանումը՝ *«Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ»*</u>

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 01, խումբ 3, դաս 3)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի շարժական և անշարժ գույքի հարկի ավտոմատացված համակարգի, համայնքի կառավարման տեղեկատվական համակարգի եւ

Գավառի համայնքապետարանի պաշտոնական կայքի սպասարկում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ին՝ շարժական և անշարժ գույքի հարկի ավտոմատացված համակարգի եւ ՏՀԶՎԿ-ին՝ ՀԿՏՀ եւ Գավառի համայնքապետարանի պաշտոնական կայքի սպասարկման եւ շահագործման համար տրամադրվող վճարներ:

2026 թ. համար նախատեսվում է 9,282,0 **հազ. դրամ,** 2027 թ. համար՝ 10,012,0 **հազ. դրամ,** 2028 թ. համար՝ 10,012,0 **հազ. դրամ**:

Նախատեսվող գումարների հաշվարկները կատարելիս հաշվի են առնվել կնքված պայմանագրերը:

3. Ծրագրի անվանումը՝ «Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մատուցում»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 01, խումբ 6, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է Գավառ համայնքի սեփականություն համարվող հողամասերի և անշարժ գույքի չափագրում, դրանց նկատմամբ իրավունքների գրանցում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում, ՁԼՄ, տրանսպորտի վարձակալություն, ՀԿ-ներին նվիրատվություն, հատուկ նպատակային այլ նյութերի, սարքավորումների ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների ձեռք բերում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող պետական գրանցման ենթակա անշարժ գույքի հաշվառման և գրանցման հետ կապված գործընթացների ապահովում, համայնքի բնակչությանը քաղաքաշինության բնագավառում մատուցվող որակյալ ծառայությունների մատուցում: Համայնքի տարբեր կազմակերպությունների եւ բնակիչների դիմումների համաձայն, տրանսպորտային միջոցի վարձակալություն: Տեղեկատվական ծառայությունների մատուցում, հատուկ նպատակային նյութերի ձեռք բերում, նվիրատվություններ ՏԻ ոլորտի ՀԿ-ներին, նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների ձեռք բերում:

2026 թ. համար նախատեսվում է **142,300,0 հազ. դրամ,** 2027 թ. համար՝ **164,600,0 հազ. դրամ,** 2028 թ. համար՝ **167,600,0 հազ. դրամ**:

Ծրագրի իրականացման համար պատասխանատու ստորաբաժանման կողմից անհրաժեշտ դրամական միջոցների հաշվարկները կատարելիս հաշվի են առնվել տվյալ ոլորտը կարգավորող իրավական ակտերի դրույթները, ինչպես նաև աշխատանքների և ծառայությունների գործող սակագները:

4. Ծրագրի անվանումը՝ *«Ռազմական պաշտպանություն»*

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 02, խումբ 1, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի ղեկավարի լիազորությունների սահմաններում հանրապետական նշանակության զինավարժությունների և զորահավաքների կազմակերպման աջակցություն

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է օրենքով սահմանված կարգով զորակոչերին, զինավարժություններին և զորահավաքներին համայնքի զինապարտ քաղաքացիների մասնակցության ապահովում, սննդի եւ անհրաժեշտ պարագաների տրամադրում և արտակարգ իրավիճակների ժամանակ բնակչության անվտանգության

ապահովում:

2026 թ. համար նախատեսվում է **3,000,0 հազ. դրամ,** 2027 թ. համար՝ **3,000,0 հազ. դրամ,** 2028 թ. համար՝ **3,000,0 հազ. դրամ**:

5. Ծրագրի անվանումը՝ *«Գյուղատնտեսություն»*

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 04, խումբ 2, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է գյուղատնտեսության ոլորտում խորհրդատվական ծառայությունների մատուցում, ագրոքիմիական քարտեզագրման աշխատանքների իրականացում, անասնագերեզմանոցի պահպանում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է համայնքի գյուղացիական տնտեսությունների կողմից հողերի մշակման աշխատանքների, հիվանդությունների եւ վնասատուների դեմ պայքարի միջոցառումների ճիշտ կազմակերպման գործում՝ բնակչության իրազեկման մակարդակի բարձրացում:

2026 թ. համար նախատեսվում է **1,000,0 հազ. դրամ,** 2027 թ. համար՝ **1,100,0 հազ. դրամ,** 2028 թ. համար՝ **1,100,0 հազ. դրամ**:

6. Ծրագրի անվանումը՝ *«Ոռոգում»*

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 04, խումբ 2, դաս 4)

Ծրագրի իրականացման նպատակն է ոռոգման համակարգերի պահպանում և կառուցում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է Գավառ համայնքում ոռոգման համակարկերի կառուցում և պահպանում:

2026 թ. համար նախատեսվում է **128,000,0 հազ. դրամ,** 2027 թ. համար՝ 33,000,0 **հազ. դրամ,** 2028 թ. համար՝ 3**3,000,0 հազ. դրամ**:

Յուրաքանչյուր տարի նախատեսում է ներկայացնել ենթակառույցների զարգացման նոր սուբվենցիոն ծրագրեր:

7. Ծրագրի անվանումը՝ *«Ճանապարհային տնտեսություն»*

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 04, խումբ 5, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է հիմնովին կամ մասնակի վերանորոգել փողոցների, մայթերի քանդված ասֆալտբետոնե ծածկը (ասֆալտապատում և ոչ ասֆալտապատ փողոցների հարթեցում): Փողոցների նշագծման, ճանապարհային նշանների տեղադրման արդյունքում ճանապարհային երթևեկությունը դարձնել անվտանգ ուղևորների, հետիոտնի և տրանսպորտային միջոցների շահագործման համար:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է համայնքի փողոցները, մայթերը դարձնել առավել բարեկարգ, ապահովել տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկությունը:

2026 թ. համար նախատեսվում է **1,341,296.2 հազ. դրամ,** 2027 թ. համար՝ **1,533,535.3 հազ. դրամ,** 2028 թ. համար՝ **1,687,501.6 հազ. դրամ**:

Հաշվի առնելով տրանսպորտային միջոցներին և բնակիչներին պատճառվող անհարմարություններն ու վնասները անհրաժեշտ է վերանորոգել անբարեկարգ տարածքները, դարձնել բարեկարգ, անվտանգ և անցանելի: Անվտանգ երթևեկության կազմակերպման համար տեղադրել ճանապարհային երթևեկության նշաններ և նշագծել փողոցները:

Յուրաքանչյուր տարի նախատեսում է ներկայացնել ենթակառույցների զարգացման նոր սուբվենցիոն ծրագրեր:

8. Ծրագրի անվանումը՝ *«Աղբահանություն և սանիտարական մաքրում»*

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 05, խումբ 1, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է մշտապես մաքուր պահել համայնքի փողոցները, մայթերը, բակային տարածքները, հուշարձանների և այլ ինժեներական կառույցների հարակից տարածքները՝ պահպանելով ընդունված սանիտարահիգիենիկ պահանջները: Բացառել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա թափոնների բացասական ներգործությունը:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ մաքուր գրավիչ և սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան տարածքներ, որոնք կօգտագործվեն համայնքի բնակիչների և այցելուների կողմից:

2026 թ. համար նախատեսվում է **220,700,0 հազ. դրամ,** 2027 թ. համար՝ **261,300,0 հազ. դրամ,** 2028 թ. համար՝ **266,300,0 հազ. դրամ**:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնքի կողմից հիմնադրված «Գավառ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» բյուջետային հիմնարկի միջոցով: Հիմնարկի գործառույթները, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատվել են համայնքի ավագանու կողմից:

9. Ծրագրի անվանումը՝ *«Գավառագետի հունի մաքրում*

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 05, խումբ 3, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է իրականացնել Գավառագետի հունի մաքրման աշխատանքներ:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է Գավառ համայնքի տարածքով հոսող գետի հունի մաքրման աշխատանքների իրականացում:

2026 թ. համար նախատեսվում է **24,000.0 հազ. դրամ,** 2027 թ. համար՝ **24,000,0 հազ. դրամ,** 2028 թ. համար՝ **26,000,0 հազ. դրամ**:

10. Ծրագրի անվանումը՝ *«Կանաչ տարածքների հիմնում և պահպանում»*

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 05, խումբ 6, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի կանաչ տարածքների խնամք և նոր կանաչապատ տարածքների ստեղծում: Համայնքի բնակիչների և հյուրերի համար ստեղծել առավել բարենպաստ և գրավիչ հանգստի վայրեր:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ստեղծվել առավել բարենպաստ պայմաններ բնակիչների հանգստի և ժամանցի համար, կանաչապատ տարածքներով միջավայրը կունենա ավելի գրավիչ տեսք:

2026 թ. համար նախատեսվում է **10,000,0 հազ. դրամ,** 2027 թ. համար՝ **10,000,0 հազ. դրամ,** 2028 թ. համար՝ **10,000,0 հազ. դրամ**:

11. <u>Ծրագրի անվանումը՝ *«Թափառող կենդանիների վնասազերծում»*</u>
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 05, խումբ 6, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է Գավառ քաղաքի տարածքում տարեցտարի ավելացող թափառող կենդանիների դեմ պայքարի իրականացում քաղաքացիների համար առավել անվտանգ պայմաններ ապահովելու համար:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է թափառող կենդանիների վնասազերծման միջոցով լուծել հանրային առողջությանն ու անվտանգությանը սպառնացող հիմնախնդիրը:

2026 թ. համար նախատեսվում է **5,000.0 հազ. դրամ,** 2027 թ. համար՝ **5,000.0 հազ. դրամ,** 2028 թ. համար՝ **5,000.0 հազ. դրամ**:

Ծրագրի իրականացման նպատակով նախատեսվում է թափառող կենդանիների վնասազերծման ծառայությունների գնման համար հայտարարել մրցույթ:

12. <u>Ծրագրի անվանումը՝ *«Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն»*</u>
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 06, խումբ 0, դաս 0)

Ծրագրի իրականացման նպատակն է Գավառ համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի վերանորոգում, ներհամայնքային փողոցների լուսավորության համակարգի պահպանում, բնակիչների մանր եւ խոշոր եղջերավոր անասուններին խմելու ջրով ապահովում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է բազմաբնակարան բնակելի շենքերի մուտքերը և տանիքները դարձնել ավելի բարեկարգ, երեկոյան ժամերին առավել հարմարավետ և անվտանգ դարձնել փողոցային երթևեկությունը, խթանել անասնապահության զարգացմանը:

2026 թ. համար նախատեսվում է **242,100.0 հազ. դրամ,** 2027 թ. համար՝ **332,100,0 հազ. դրամ,** 2028 թ. համար՝ **307,100,0 հազ. դրամ:**

Նշված ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցները ուղղվելու են պոմպակայանների, փողոցային լուսավորության սպասարկմանն ու դրանց շահագործման ընթացքում սպառած էլեկտրաէներգիայի վարձի վճարմանը:

Յուրաքանչյուր տարի նախատեսում է ներկայացնել ենթակառույցների զարգացման նոր սուբվենցիոն ծրագրեր:

13. <u>Ծրագրի անկանումը՝ *«Հանգիստ, մշակույթ և կրոն»*</u>
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 08, խումբ 0, դաս 0)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքում մշակութային կազմակերպությունների պահպանում, շենքերի հիմնանորոգում, գույքով համալրում, հանգստի գոտիների կառուցում եւ միջոցառումների իրականացում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ավելացնել գրադարանային ծառայություններից և մշակույթի տներից օգտվողների թիվը՝ բարձրացնելով սպասարկման որակը, թարմացնել և արդիականացնել գրադարանային ֆոնդը, իրականացնել մշակութային տարբեր միջոցառումներ, ունենալ ավելի բարեկարգ հանգստի գոտիներ:

2026 թ. համար նախատեսվում է **137,800.0 հազ. դրամ,** 2027 թ. համար՝ **152,800.0 հազ. դրամ,** 2028 թ. համար՝ **141,800.0 հազ. դրամ**:

Նշված ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցները ուղղվելու են մշակույթի

տների, գրադարանների պահպանման, մշակույթային միջոցառումների կազմակերպման համար: 2025 թ. նախատեսում է ներկայացնել ենթակառույցների զարգացման նոր սուբվենցիոն ծրագրեր մշակույթի տների շենքերի հիմնանորոգման նպատակով, ինչպես նաեւ իրականացնել մասնակցային բյուջետավարում:

14. Ծրագրի անվանումը՝ *«Նախադպրոցական ուսումնական հաստատությունների պահպանում»*

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 09, խումբ 1, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի 1-6 տարեկան երեխաների ցերեկային խնամք մանկապարտեզներում՝ ապահովելով նրանց ֆիզիկական, մտավոր և հոգևոր զարգացումը, առողջության ամրապնդումը, ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, ինչպես նաև տարրական դպրոցական ուսուցման նախապատրաստումը: Համայնքի մանկապարտեզներ հաճախող երեխաների համար ապահովել օրենքով սահմանված նորմերին համապատասխան բարենպաստ պայմաններ:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է համայնքի 1-6 տարեկան երեխաների ընդգրկում համայնքում գործող 15 մանկապարտեզներում, երեխա-հաճախումների թվի ավելացում, նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում երեխաների ընդհանուր զարգացման և պատշաճ պայմաններով ապահովում:

2026 թ. համար այս ուղղությամբ նախատեսվում է **646,000.0 հազ. դրամ,** 2027 թ. համար՝ **632,000.0 հազ. դրամ,** 2028 թ. համար՝ **658**,000.**0 հազ. դրամ:**

Նախատեսված գումարը ներառում է կազմակերպությունների պահպանման ծախսերը, մանկապարտեզների շենքային պայմանների բարելավմանը: Յուրաքանչյուր տարի նախատեսում է ներկայացնել ենթակառույցների զարգացման նոր սուբվենցիոն ծրագրեր:

15. Ծրագրի անվանումը՝ *«Հիմնական ընդհանուր կրթություն, միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն»*

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 09, խումբ 3,4, դաս 0)

Ծրագրի իրականացման նպատակն է միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող, սոցիալապես անապահով, ինչպես նաեւ գերազանց առաջադիմությամբ սովորող ուսանողներին տրամադրել աջակցություն՝ ուսման վարձի փոխհատուցման տեսքով:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է Համայնքի բարձրագույն եւ միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին ցուցաբերել դրամական օգնություն՝ ուսման վարձերի վճարման հարցում:

2026 թ. համար այս ուղղությամբ նախատեսվում է **8,400.0 հազ. դրամ,** 2027 թ. համար՝ **8,400.0 հազ. դրամ,** 2028 թ. համար՝ **8,400.0 հազ. դրամ:**

16. <u>Ծրագրի անվանումը՝ *«Արտադպրոցական դաստիրակություն»*</u>
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 09, խումբ 5, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է ստեղծել բարենպաստ պայմաններ համայնքի տարածքում գործող արտադպրոցական դաստիարակության հաստատություններում եւ մատուցել արտադպրոցական դաստիարակության ծառայություն երեխաների համար ապահովել օրենքով սահմանված նորմերին համապատասխան բարենպաստ պայմաններ:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է համայնքի բնակիչների համար կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, երեխաների ընդհանուր զարգացման և պատշաճ պայմաններով ապահովում:

2026 թ. համար այս ուղղությամբ նախատեսվում է **362,804.9 հազ. դրամ,** 2027 թ. համար՝ **469,804.9 հազ. դրամ,** 2028 թ. համար՝ **532,304.9 հազ. դրամ:**

Նախատեսված գումարը ներառում է կազմակերպությունների պահպանման ծախսերը և շենքային պայմանների բարելավում և ենթակառույցների զարգացման նոր սուբվենցիոն ծրագրերի իրականացում :

17. <u>Ծրագրի անվանումը՝ *«Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին»*</u>
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 10, խումբ 7, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է Գավառ համայնքի բյուջեի միջոցների հաշվին միայնակ տարեցներին և սոցիալապես անապահով այլ խավերին դրամական աջակցություն:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է հասարակության մեջ անապահով ընտանիքների սոցիալական աջակցությանն ուղղված առավել նպատակային և հասցեական հատկացումների կատարում, սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման գործում տեղական ինքնակառավարման մարմինների դերի մեծացում:

2026 թ. համար նախատեսվում է **15,000.0 հազ. դրամ,** 2027 թ. համար՝ **20,000.0 հազ. դրամ,** 2028 թ. համար՝ **20,000.0 հազ. դրամ:**

Ծրագիրը համարվում է շարունակական՝ միջոցներ են նախատեսվել սոցիալապես անապահով անձանց դրամական օգնությունների հատկացման համար: Դրամական օգնությունների տրամադրման համար շահառուների ընտրությունը կատարվում է համայնքապետարան ներկայացված դիմումների հիման վրա, իսկ շահառուների վերջնական ցուցակը և յուրաքանչյուրին հատկացվող դրամական աջակցության չափը որոշվում է այդ նպատակի համար ստեղծված հանձնաժողովի եզրակացության առկայությամբ: